

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-2-2-Ա

ք. Երևան

11.03.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի մարտի 11-ի նիստում քննարկեց 2020 թվականի փետրվարի 26-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ REMY MARTIN & C° (20 rue de la Société Vinicole F-16100 COGNAC, FR) ընկերության բողոքը (IR1424312) «REMY MARTIN» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրերի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 45-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի կողմից բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին: Նշանակված կոլեգիայի անդամները կարծում են, որ «ACCORD ROYAL» տարրին հնարավոր է ինքնուրույն պահպանություն տրամադրել, քանի որ այն չի հանդիսանում ուղղակիորեն նկարագրական 33-րդ դասի ապրանքների համար, բացի այդ այս հասկացությունը կապված է այն այն եզակի պարզևի հետ, որը թագավոր Լյուդովիկոսը շնորհել է Ռեմի Մարտինին:

Փորձաքննության բաժնի պետը չառարկեց կոլեգիայի ներկայացրած առաջարկին:

Բողոքարկողը համաձայն էր, որ Օրենքի իմաստով “1738” թվին ինքնուրույն պահպանություն չի կարող տրամադրվել, սակայն պնդում էր, որ ներկայացված ապրանքային նշանի ամբողջության մեջ կարող իրավական պահպանություն տրամադրվել:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված բողոքը մասնակիորեն բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչել և «REMY MARTIN» (IR1424312) ապրանքային նշանը գրանցել, բացի «REMY MARTIN» և «ACCORD ROYAL» արտահայտություններից մնացած բոլոր գրառումներին, նաև շշի ձևին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**